

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Երիտասարդությունը եւ մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ընդունեց Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնական վարչութեան պատուիրակութիւնը, որ նախարարը շնորհաւորեց անոր պաշտօնին ստանձնած մաս առ իր Պատուիրակութեան մաս կը կազմէին Բիւզանդ թորիկեան, Յարութ Զէքիճեան, Գառնիկ Մկրտիչեան եւ Պետիկ Սապունճեան:

Հանդիպումին քննարկումի առարկայ դարձան Պուրճ Համուտի Բաղադրարարները դաշտը արդիական վազբուցելով մը օժտելու կարելիութիւնները: Խօսակցութեան նաեւ մարզական եւ սկստական շարժումներու կարեւորութեան եւ անոնց համար նախատեսելի բարեփոխումներուն մասին:

Հ.Մ.Ը.Մ.Ի պատուիրակութիւնը նախարար Յովնանեանի յայտնեց, որ 11-ին 16 Օգոստոս 2001ին Պէյրութի մէջ պիտի կայանայ Համա-Հ.Մ.Ը.Մ.Վ կան ճիւղ խաղերը, որոնք պիտի նպաստեն երկրին զբօսաշրջութեան, նկատի ունենալով, որ զանազան երկիրներէ աւելի քան 500 մարզիկներ եւ այլ պատասխանատուներ պիտի մասնակցին խաղերուն:

ՍՅԷՅՐ ԿԸ ՅՈՒՍԱՅ

Մարոնիներու ՍՖէյր պատրիարքը Ս. Մննդեան տօնին առիթով լիբանանցիներուն յղուած իր պատգամին մէջ յոյս յայտնեց, որ խաղաղութիւն կը հաստատուի, եւ կող ուղղեց բոլորին՝ գերադասելու հայրենիքին շահը անձնական շահերէն:

Պայեստինի մէջ անգէն զոհերուն համար ցաւ յայտնելով, ՍՖէյր պատրիարքը նկատել տուաւ, որ Երուսաղէմ պատմութեան մէջ ճանչցուած է իբրեւ խաղաղութեան քաղաքը, բայց այսօր դարձած է առարկան վայրագ հակամարտութեան մը, երբ միաստուածեան կրօններուն՝ հրէական, քրիստոնեայ եւ իսլամ կրօններուն հետեւողներուն միջեւ, մինչ ան պէտք էր բաց մնար բոլոր հաւատացեալներուն առջեւ, առանց բացառութեան կամ մենաշնորհներու:

ՍՖէյր իր պատգամին մէջ վերաբարձեց լիբանանցիներուն մէկ հատուածի անտեսումը, գաղթը եւ ապրուստի դժուարութիւնները:

ՊԱՅՏՈՒՐԻ ՀԱՐՅԵՐԸ՝ ԸՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ ընդունեց տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտին, որուն կ'ընկերակցէր Պայեստին քաղաքապետական խորհուրդի պատուիրակութիւնը:

Նախարար Արիտի յայտարարեց, որ վարչապետին ներկայացուցած են շրջանին կարիքները, յիշեցնելով, որ անիկան անցեալին ճակատ եղած է, յանձն առած է մեծ զոհողութիւններ, զոհաբերած է իր լաւագոյն զաւակները, եւ պէտք է զայն մոռնալ գաղթականներու տուեղարձի ծիրէն ներս հատուցումներու վճարման ատեն:

ՄԱՀԱԶԴ

One Estate Company SAL ընկերութեան տնօրէնությունը եւ պաշտօնէությունը կը գումեն նախկին երեսփոխան՝

ԱՐԱ ԵՐԵՒԱՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 17 Դեկտեմբեր 2000ին:

ՄԱՀԱԶԴ

Ս. Յովնանեան Կարապետ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւր, Թաղական Խորհուրդի եւ Տիկնանց յանձնախումբը կը գումեն իրենց թաղականութեան ատենակցութիւն:

ՆՈՒՊԱՐ ՍԻՄՈՆ ՅԱԿՈԲԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Զորքաբթի, 20 Դեկտեմբեր 2000ին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սոնա Յակոբեան եւ զաւակները՝ Բաֆֆի եւ Սազօ

- Տէր եւ տիկին Սիմոն Յակոբեան
- Տէր եւ տիկին Սարգիս Պալապանեան
- Տէր եւ տիկին Ռոպէր Խուրի
- Տիար Ստեփան Յակոբեան
- Տէր եւ տիկին Հայկ Պասմաճեան
- Տիար Կարապետ Խաչիկեան
- Տէր եւ տիկին Էստուար Ատուրեան
- Եւ համայն ազգականներ կը գումեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին՝

ՆՈՒՊԱՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ

մահը: Յուդարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր 2000, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Հայաշէնի Ս. Յովնանեան Կարապետ Եկեղեցւոյ մէջ, էրեֆիլէ, որմէ ետք հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Յորն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Երկայն ընդունիլ իբրեւ մահապը:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին քնակարանը, Էշրեֆիլէ, Ուրբաթ 22-էն Շաբաթ, 23 Դեկտեմբերին:

ՔԼԻՆԹԸՆԷՆ ՇՆՈՐՀԱԻՐՈՐԱԿԱՆ...

Շարունակում Ա. Էջեմ

Ֆիթրի տօնին ստեղծած կրօնական մթնոլորտին առիթով կ'ուզեմ վերահաստատել, թէ լաւատես եմ, որ բոլոր կողմերու ճիշդ երու մէկ տեղումով կրօնը յաջողի Միջին Արեւելքի մէջ հանդարտութիւնը վերահաստատելու եւ ամբողջական խաղաղութեան ուղղութեամբ յառաջդիմելու ճիշդ երու: Միացեալ Նահանգներ պատրաստեն Լիբանանի հետ գործակցելու այս նպատակներուն հասնելու համար, կը գրէր ան:

Երէկ ընդունեց այցելութիւնը Լեռնալիբանանի եւ Ժիպէյի յոյն ուղղափառներու առաջնորդ Ժորժ Խըւրըրի եւ անոր հետ քննարկեց Լեռնալիբանանի գաղթականներու տունդարձը: շնորհըրուեցաւ Լեռնալիբանանի վերադարձը փակելու այս թղթածրարը: Նախագահ Լահուտի ապա ընդունեց երկրագործութեան նախարար Ալի Ապտալայի եւ Երանկի հրամանատար գործարար Միշլ Միշլմանի այցելութիւնները:

Նախագահ Լահուտի ապա ընդունեց երկրագործութեան նախարար Ալի Ապտալայի եւ Երանկի հրամանատար գործարար Միշլ Միշլմանի այցելութիւնները:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ նախարար Ղազի Արիտի երէկ հասնելու մը ունեցաւ Լիբանանի մէջ Հոլանտայի դեսպանին հետ: Ան հանդիպում մը ունեցաւ նաեւ ռուսապատուիրակութեան պատուիրակութեան ղեկավարութեան ծիրէն ներս երկու երկիրներու միջեւ յարաբերութիւնները:

● ԿՐԹՈՒԹԵԱՆ եւ բարձրագոյն ուսման նախարար Ապտէլուահիմ Մըրատ երէկ հանդիպում մը ունեցաւ Լիբանանի մէջ Բուլղարի գեսպան Էնրիքէ

Թոման Հերնանտէզի հետ: Հանդիպումին քննարկուեցան կրթական յարաբերութիւնները եւ զանոնք զարգացնելու միջոցները:

● ՄՇԱԿՈՅԹԻ նախարար Ղասսան Սալամէ տեսակցութիւն մը ունեցաւ Ֆրանսական պատուիրակութեան մը հետ: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան 2001ին Լիբանանի մէջ կայանալիք Ֆրանսախօս երկիրներու Կապուկերպութեան վեհաժողովին պատրաստութեան առնչուած հարցեր:

Հանդիպումին ներկայ եղան Ֆրանսայի ապահովութեան եւ փրոթոգոլի պատասխանատուներ եւ թղթակիցներ, ինչպէս նաեւ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի ներկայացուցիչը, նախագահական պալատի փրոթոգոլի պատասխանատու եւ արտաքին ու ներքին գործոց նախարարութիւնները:

● ԼՇՎԱՅՈՒՍԻ հարցերու նախարար Ասաստ Տիսայ երէկ զիջուրեց մանուկներու հարցով զբաղող գերագոյն մարմինին ժողովը:

Նախարարը շնորհակալութիւն յայտնեց տարբեր կազմակերպութիւններու, անոնց ջանքերուն համար եւ ըսաւ, որ Լիբանանի մէջ մանուկները մեծ կարիքներ ունին եւ շեշտեց, թէ այլ կարիքներ կը լուծուին տքնաջան աշխատանքով:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԷ

● Չատիկեան, Սուրատեան, Յովակիմեան եւ Ունանեան ընտանիքներ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց մօր, մեծ մօր եւ հարազատի՝ ԿԻԼԻԻԶԱՐ ՉԱՏԻԿԵԱՆԻ մահուան սուգին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԷ

● Անդրանիկ Պոյաճեան եւ զաւակներ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց կնոջ եւ մօր՝ ՎԱՐՈՒԻՇ ՊՈՅԱԺԵԱՆԻ մահուան սուգին:

ԲԱՆՏԱԻՐՈՒԹԻՒՄ

Տէր եւ տիկին Զոհրապ եւ Շուրի Ղազարեան բախտաւորուած են առջինէլ մանչ զաւակով մը՝

ՍԱՐԿԱՏ

22 Դեկտեմբեր 2000

ԲԱՆՏԱԻՐՈՒԹԻՒՄ

Տէր եւ տիկին Յովիկ եւ Թալին Գոլյումճեան բախտաւորուած են առջինէլ մանչ զաւակով մը՝

ՊԱՐԳԵԻ (ՊԱՐՕ)

21 Դեկտեմբեր 2000

Կ՝ՈՒՉՈՒԻՆ

● JAVA FIRE PROTECTION հաստատութիւնը կարիք ունի շուկայի վրայ ծախող Կիտասարդներու, պարաօրէյի վկայականով, արբերին եւ անգլերէն գիտնալը պայման: Հեռ. 01-502329, կէսօրէ առաջ ժամը 10:00ին մինչեւ ժամը 2:00:

● Բարտուղարուի մը, որ գիտնալը համակարգիչ գործածել եւ անգլերէն լեզու: Հեռնաւայնի 01-242549 եւ 01-263631 թիւերուն:

ՏՕՆ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՒԱԳԻ

Ի գիտութիւն մեր ժողովուրդին. կը յայտնեմք, թէ Երկուշաբթի, 25 Դեկտեմբեր 2000ին տօն է Ս. Ստեփանոս Նախաարկաւագին: Այդ օրը մեր թեմի եկեղեցիներուն մէջ անձնուիրաբար ծառայող բոլոր սարկաւագներուն եւ կիսասարկաւագներուն տօն է միաժամանակ: Այս առիթով Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Նոր Մարաշի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ: Սրբազան արարողութեանց պիտի նախագահուի քարոզ:

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Բայոց թեմի)

Յաւարտ պատարագի պիտի կատարուի հոգեհանգստեան յատուկ պաշտօն թեմի եկեղեցիներուն մէջ ծառայած հանգուցեալ սարկաւագներուն եւ կիսասարկաւագներուն հոգոյն:

Կը հրաւիրեմք մեր հաւատացեալները՝ ներկայ ըլլալու սրբազան արարողութեանց եւ գնահատելու մեր սարկաւագներու ծառայութիւնը:

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՍ ԽԻՉՊՊԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ ԸԱՆԴԻՍԱԻՐՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՉ

Կիրակի, 24 Դեկտեմբերին, Ս. Ստեփանոս Նախասարկաւագի եւ Սարկաւագ տօնին առիթով, հանդիսաւոր սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 8:00
Ս. Պատարագ՝ ժամը 10:00
Քարոզ՝ ժամը 11:00
Պատարագէն ետք Ն. Ս. Օ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ, միաբանութեան անդամներուն հետ, վեհարանի դահլիճին մէջ պիտի ընդունի սարկաւագները եւ իր հայրական պատգամը պիտի տայ:

* * *

Երեկոյեան ժամը 5:00ին, Անթիլիասի Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Ս. Ստեփանոսի նախատօնակը: Ժամերգութեան ետք վեհափառին նախագահութեամբ եւ միաբանութեան ներկայութեամբ վեհարանի դահլիճին մէջ տեղի պիտի ունենայ դասախօսական եւ գեղարուեստական ելոյթ մը՝ նուիրուած Ս. Ստեփանոսին:

Սիրով կը հրաւիրուին հաւատացեալները ներկայ գտնուելու եկեղեցական արարողութեանց եւ ներշնչուելու Ս. Ստեփանոսի նախատօնակին խորհուրդով:

ԳԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԱՊԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԵՐՈՒ ԸՆՆԱՐԿՈՒՄ

Ներքին գործոց եւ զիջական ու քաղաքապետութեանց հարցերու նախարար Էլիաս Մըր երէկ այցելեց պետութեան անվտանգութեան ուժերու ընդհանուր տնօրէնութեան կեդրոնատեղին, ուր հանդիպում մը ունեցաւ ընդհանուր տնօրէն գործարար Մանսուրի եւ բարձրաստիճան սպաներու հետ:

Նախարար Մըր նաեւ նախագահեց հարաւի ապահովութեան գործառն մը ներքին ապահովութեան ուժերու հրամանատարներուն եւ բարձրաստիճան սպաներու հետ ժողովներու, որոնց ընթացքին արծարծուեցան յոյ ուժերու գործունէութեան եւ քաղաքացիներուն հետ յարաբերութեան բարելաւման միջոցները:

Միւս կողմէ, նախարար Մըր Պէյրութի նահանգապետին, քաղաքային պաշտպանութեան ուժերու տնօրէնին եւ ներքին ապահովութեան ուժերուն տուեցուցումները պատրաստ վիճակի մէջ մնալու տօնական օրերուն, ամէն յիշուցութիւն եւ օժանդակութիւն տալու քաղաքայիններուն:

ՊԸՐԻԻ ՇՆՈՐՀԱԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԵՏԻ ԶԸՆԴՈՒՆԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երէկ ստացաւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մատթէյն Օլարայթի Ֆիթրի տօնը շնորհաւորող նամակ մը:

Օլարայթ իր նամակին մէջ կը հաստատէ, որ երկու երկիրները կը բաժնեն նոյն տեսակէտը շրջանին մէջ խաղաղութեան ապահովութեան, բարգաւաճումին եւ կայունութեան հաստատումին անհրաժեշտութեան մասին, որ պէսպի շրջանի բոլոր ժողովուրդները կարենան ակնկալել պայծառ ապագայ մը: «Վստահ եմ, որ Լիբանան պիտի մասնակցի ընդհանուր ճիգին եւ պիտի ընենք մեր կարելին, մեղմացնելու վայրագութիւնը եւ բոլոր կողմերը վերադարձնելու բախտաւորութիւններու սեղանին» կը գրէր ան:

Արարտարանի նախագահին տեղեկատուական գործակալը երէկ յայտարարեց, որ Լիբանանի եւ շրջանային պայմաններուն, բռնագրաւեալ Պաղեստինի մէջ Իսրայէլի գործած ուժերուն, եւ առ ի յարգանք ինթիֆատայի նահատակներուն, խորհրդարանի նախագահը Ֆիթրի եւ միւս տօներուն առիթով շնորհաւորութիւններ պիտի չընդունի:

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

● Սօսի Ուրֆալեանի մահուան առիթով, Տէր եւ տիկին Երաշ Գուրոյեան 50,000՝ Լ. Ո.

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԶԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԱՐԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ ԺԵՅՈՒՄԻ

● ԿԻՐԱԿԻ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2000
ՃՐԱԳԱՆՈՅՍ Ս. ՄՆՆԴԵԱՆ Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի
Ժամը 17:00ին՝ երեկոյեան ժամ, ընթերցում մարգարէական թղթոց:
Ժամը 18:00ին՝ ճրագայրոյցի Ս. պատարագ, Նախատօնակ:
Ժամը 24:00ին՝ կէս գիշերի Ս. պատարագ:

● ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2000
Ս. ՄՆՆԴԵԱՆ Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի
Ժամը 10:00ին՝ հայրապետական Ս. պատարագ եւ քարոզ

ԱՍԵՆԱՊԱՏԻ ՏԵՐ ՆԵՐՍԵԱ ՊԵՏՐՈՍ ԺՈՒ
(Կաթողիկոս - պատրիարք կաթողիկէ հայոց)
Յաւարտ Ս. պատարագի՝ Աջահամբոյր:

● ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 1 ՅՈՒՆԻՍԱՐ 2001
Տօն տնօրէնութեան եւ Անուանալոյնութեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի
Պատարագները Կիրակի օրերուն պէս:
Ժամը 10:00ին՝ հանդիսաւոր Ս. պատարագ:

● ՇԱԲԱԹ, 6 ՅՈՒՆԻՍԱՐ 2001
Աստուածայայտնութիւն եւ Մկրտութիւն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի
Ժամը 10:00ին՝ կը պատարագէ եւ կը քարոզէ

ԱՐԸԻ. ԸԱՅՐ ԿԱՐԳԱՆ ԵՊՍ. ԱԶԱՐԵԱՆ
(Ընդհանուր փոխաւոր Պէյրութի թեմին)
Ապա Զորքինէք եւ Մկրտութիւն Տեառն:
Սրբազան երգեցողութիւնները կը կատարէ «Կիլիկիա» երգչախումբը:

ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՅԻ ԶԱԼՔԱ, Հեռ. 04/710735-6-7

Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդեան տօնին առիթով՝ Չայնաւոր Ս. պատարագ պիտի մատուցանէ եւ աւուր պատշաճի քարոզի՝

ԱՐԿ. Հ. ԿԱՐԳԱՆ ԵՊՍ. ԱԶԳԱՐԵԱՆ
Երկուշաբթի, 25 Դեկտեմբեր 2000, առաւօտեան ժամը 10:30ին:
Շրջանի բոլոր հաւատացեալները հրաւիրուած են մասնակցելու սոյն հոգեպարար արարողութեան:

ԹՈՒՐԵՒԱ

ՈՒՄՐԱՆԻԷԻ ԲԱՆՏԻՆ ՄԷՉ ԸՄԲՈՍՏՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՉ զՏԱԻ

ՊՈԼԻՍ, 22 (ՌՈՅԹԸ) — Թրքական ապահովության ուժերը Ուրբաթ օր հակակաշիկի տակ առին Պոլսոյ մէջ բանտը, ուր հարկւրաւոր բանտարկեալներ կը շա-

րունակէին ըմբոստու- թիւնը, որուն մասնակցած էին թրքական այլ բան- տեր: Խուզարկումները խլած են աւելի քան 28 զոհ: «Անատոլու» լրատու գործակալութիւնը հա-

ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԵԼԻ ՄԱՏՆՈՒԱԾ ԵՆ

Այսրոյ դրանաւի հրէական բնակեցման վայրերէն մէկուն մօտ կատարուած անմասնաբաժան կանգնուած մը մէկ զոհ եւ երեք վիրաւորներ պատճառեց երէկ: Չորս գործողութիւնը կատարող պաղեստինցիներ էր, իսկ վիրաւորները՝ հրէաներ:

Իսրայէլացի ակնատես մը յայտնեց, որ պաղեստինցի մը մտած է սրճարանը, ուր հրէաներ կային, եւ պայթեցուցած վրան վետեղուած ռումբերը:

Այսրոյ դրանաւի եւ Կապալի մէջ տեղի ունեցած երկու այլ միջադէպերու ընթացքին սպաննուած են երկու պաղեստինցիներ: Իսրայէլեան բանակը յայտնեց, որ առաջին պաղեստինցի սպաննուած է Կապալի Նեցարիմ բնակեցման վայրին մէջ, ուր կ'աշխատէր: Բանակին համաձայն, ան սպաննուած է պաղեստինցիներու կողմէ, որոնք կրակ կը բանային բնակեցման վայրին վրայ: Պաղեստինցի պաշտօնատարներ սակայն ըսին, որ Սալամա Սաուրքա սպաննուած է իսրայէլեան փամփուշտներով: Այսրոյ դրանաւի մէջ, իսրայէլացի մը սպաննեց պաղեստինցի մը, որ փորձած էր պայն դաշունահարել, յայտնեց իսրայէլեան բանակը: Պաղեստինեան աղբիւրներուն համաձայն, ան սպաննուած էր, արտին մէջ աշխատանքի պահուն:



Իսրայէլացի զինուորներ իրենց յատուկ ռոմբ կը ձերբակալեն պաղեստինցի երիտասարդ մը:

Իսրայէլացի զինուորներ իրենց յատուկ ռոմբ կը ձերբակալեն պաղեստինցի երիտասարդ մը: Իսրայէլացի զինուորներ իրենց յատուկ ռոմբ կը ձերբակալեն պաղեստինցի երիտասարդ մը: Իսրայէլացի զինուորներ իրենց յատուկ ռոմբ կը ձերբակալեն պաղեստինցի երիտասարդ մը:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԵԼԻ ՄԱՏՆՈՒԱԾ

Պաղեստինցի զինուոր բանագնաց Սաէյ Ռաւթաթ, որ կը մասնակցի Ռաշինկորնի հանդիպումներուն, դիտել տուաւ, որ խաղաղութեան բանակցութիւնները տազնապի մատնուած են, որովհետեւ պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն միջեւ վիճակը կը մնայ խոր: Ան աւելցուց, որ տարակարծութիւնները այնքան զօրաւոր են, որ պաղեստինեան պատուիրակութիւնը Հինգշաբթի գիշեր հեռացաւ նիւտերէն մէկէն:

Միւս կողմէ, պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ յոյս յայտնեց, որ խաղաղութեան վերջնական ու ամբողջական համաձայնագիր մը 2024-ին իրականութիւն դառնայ:

Ուրախաբար, իր կարգին, ըսաւ, որ պաղեստինեան պատուիրակութիւնը ծամերով հանդիպում ունեցած է ամերիկացի մասնաւոր պատուիրակ Տենիս Ռոսի եւ ամերիկեան պատուիրակութեան:

ԿՈՒՍԻՆՍՔԻ ԵՐԱՇԽԱՒՈՐԱԳԻՆՈՎ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԵՅԱԻ

ՄԱՏՐԻՏ, 22 (ՌՈՅԹԸ) — Սպանացի դատարար մը Ուրբաթ օր երաշխաւորակցումով ազատ արձակեց ռուս Վլադիմիր Կուսինսքին, հրահանգելով սակայն, որ ան ընկալարանային կայանքի տակ զրուի:

Պալմասար Կարսոն 5,35 միլիոն տոլարի երաշխաւորակցին հաստատեց, պահանջելով, որ Կուսինսքի չհեռանայ Սպանիոյ հարաւային շրջանին մէջ գտնուող բնակարանէն, որ ոստիկանութեան մնայուն հսկողութեան տակ պիտի զրուի:

Կուսինսքի տասը օր առաջ ձերբակալուած էր Սպանիոյ մէջ, Էնթրիսիոյ կողմէ արձակուած ձերբակալման հրամանագրի մը լոյսին տակ: Ռուսիա կը պահանջէ Կուսինսքի արտադրանքները, որպէսզի գայն դատարարութեան ենթարկէ:

ԻՐԱՆ ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՕՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ ՄԵՃ ՅՈՅՅԵՐ

ԹԵՀՐԱՆ, 22 (ՌՈՅԹԸ) — Իրան Ուրբաթ օր մեծ ցոյցերով նշեց «Երուսաղէմի Օրը»: Տասնեակ հազարաւոր իրանցիներ մասնակցեցան Իսրայէլը դատապարտող ցոյցերուն:

Յուցարարները քայլեցին Թեհրանի պողոտաներէն՝ հասնելու համար զինուոր մկկիթը, ուր մասնակցեցան Ուրբաթ օրուան հաւաքական աղօթքին: Յուցարարները Իսրայէլն ու Միացեալ Նահանգները դատապարտող բացազանչութիւններ ու նշանախօսքեր կը յայտարարէին:

Յոյցին մասնակցող բարձրաստիճան պաշտօնատարներուն կարգին էին արտաքին գործոց նախարար Բաժայ Խարապի եւ Ալի Աքպար Մոհթաշեմի: Նախագահ Մոհթաշեմ Խարապի, ցուցարարներուն միացաւ մկկիթին մէջ:

Crochet SARO SOUK ARAX - JAL EL-DIB

15 ԱՄԵԱԿ ԱՉԳ. ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈԼԵՃԸ 26-ը կը հրաւիրէ այցելելու իր կազմակերպած աւանդական ԿԱՂԱՆԴԻ ՊԱՁԱՐԸ, «Սիրան Մանուկեան» համադասարանին մէջ: Պիտի վաճառուին Կաղանդի յատուկ զարդեր եւ մոմեր, խմիչք, սրգեղէն, խաղալիքներ եւ բազմազան նուէրներ: Բացում՝ Ուրբաթ, 15 Դեկտեմբեր 2000, երեկոյեան ժամը 7:30ին: •Պագարը բաց պիտի ըլլայ Դեկտեմբեր 16-էն 28, ամէն օր (բացի Դեկտեմբեր 25-էն) ժամը 11:00-էն 16:00:

Chaussures REGENT Soldes Autostrade Jal El Dib Hazmieh Hamra Zahle Tripoli Bikfaya

ՓԵՐԵՍ ԿԸ ԸՆՈՒՆԱՅ ԸՆՏՐԱՊԱՅԵԱՐԵՆ

Նախկին վարչապետ Շիմոն Փերէս հրաժարեցաւ թեկնածութիւն ներկայացնել վարչապետական ընտրութիւններուն, երբ չկարողացաւ ապահովել ձախակողմեան Մերէց Կուսակցութեան զօրակցութիւնը: Փերէսի հեռանալով ընտրապայքարը կը մնայ Պարաքի ու Լիքուտի ղեկավար Արիէլ Շարոնի միջեւ:

Փերէս խոստացաւ շարունակել զօրակցութիւնը խաղաղութեան գործընթացին՝ թափ տալով խաղաղութեան ճիգերուն: Ան աւելցուց, որ պէտք է կանխարգիլել Շարոնի յաղթանակը Փետրուարի ընտրութիւններուն, որովհետեւ աջակողմեակներու քաղաքականութիւնը կը սպառնայ շրջանային խաղաղութեան:

Իսրայէլի մէջ կատարուած վերջին հարցախոյզներուն արդիւնքները սակայն յոյս չեն ներշնչել Պարաքի համար, որուն ժողովրդականութիւնը սկսած է նահանջ արձանագրել, ապահովելու համար յաղթանակ մը Փետրուարի ընտրութիւններուն, Պարաք անպայմանօրէն պէտք է խաղաղութեան համաձայնագիր մը ստորագրէ պաղեստինցիներուն հետ:

Իսրայէլացի արաբ երեսփոխանները, որոնք չլազոյցեցան թեկնածու մը ունենալ ընտրութիւններուն համար, դիտել տուին, որ Պարաք կրնայ յաղթանակ մը ապահովել արաբներուն քուէներով. եթէ խաղաղութեան համաձայնագիր մը ստորագրած ըլլայ պաղեստինցիներուն հետ:

Միւս կողմէ, նախկին վարչապետ Պենիամին Նեթանիահու կը նախատեսէ, որ Իսրայէլի խորհրդարանը մօտ օրէն լուծուի, եւ թէ երբ ընդհանուր ընտրութիւններ կայանան, ինք պիտի վերադառնայ իշխանութեան: Նեթանիահու կը յուսայ, որ խորհրդարանը շուտով ինքզինք լուծէ եւ վարչապետի ընտրութիւններու կողքին կայանան նաեւ երեսփոխանական ընտրութիւններ, որպէսզի ինք իրաւունք ունենայ վարչապետ դառնալու թեկնածութիւն ներկայացնելու: (ՌՈՅԹԸ)

ԻՐԱՆ ՍՈՒՐԻՈՅ ԱՐՏԱՅԱՆՁՆԵՅ ԵՐԵՐ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐ

ՊԵՅՐՈՒԹ, 22 (ՌՈՅԹԸ) — Իրան Սուրիոյ արտադրանքներէն մէկը իսլամականներ, որոնք անցեալ ամսուան մէջ թեհրան ծամանած էին, իրոյ տարած արմատական իսլամներու դէմ ձեռնարկուած արշաւներէն Սուրիոյ եւ Յորդանանի մէջ, յայտնեց իսլամական գործիչ մը Ուրբաթ օր: Եասէր Սերիբաւ, որ Իրան երբեք իսլամականները ձերբակալելէն քանի մը օր ետք գանձեց յանձնած է դաշնակից Սուրիոյ: Սուրիոյ կառավարութիւնը մեկնաբանութիւն չկատարեց:

ՄԱՍԹԵՐ ՄՈՒ MASTERS ALL supermarket ԿՆՈՒՄԴ ԿԱՏԱՐԷ՝ ՍՈՒՓԵՐՄԱՐԷԹ ՄԱՍԹԵՐ ՄՈՒԼԵՆ ԱՄԷՆ ՕՐ ԹԱՐՄ ԵՒ ԸՆՏԻՐ ՄՍԵՂԷՆՆԵՐՈՒ ԱՅԼԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ, ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ՄԱԿԵՐՈՎ: ԳՆՈՒՄԴ ԿԱՏԱՐԷ՝ ՍՈՒՓԵՐՄԱՐԷԹ ՄԱՍԹԵՐ ՄՈՒԼԵՆ

Միջապգային Քաղաքական

ԲԱՐԵԿԱՐԳՉԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀՐԱԺԱՐՈՒՄՈՎ ՎԵՐՋ ԿԸ ԳՏՆԷ ԱԶԱՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՉԱՆԸ

Հեռացնելով մշակույթի եւ իսլամական դաստիարակութեան նախարարը, որ ազատ արտայայտութեան խորհրդանիշ դարձած էր երկրին մէջ, Իրանի պահպանողականները վերջ մը զրին մամուլը եւ արուեստի մարզերուն ազատական ժամանակաշրջանին:

Նախագահ Մոհամէտ Խաթեմի, տեղի տալով պահպանողականներու ճնշումներուն առջեւ, Հինգշաբթի, 14 Դեկտեմբերին, ընդունեց Այաթոլլա Մոհամեդեանի հրահրականը:

Մոհամեդեանի միշտ առաջնորդած էր մշակութային հարցերը վերատեսուցեան ենթակառուցումը նախագահ Խաթեմիի ճիգերը եւ գրեթէ չորս տարիէ ի վեր թիրախ դարձած էր պահպանողականներուն: Անոր շնորհիւ տասնեակ մը օրաթերթեր եւ պարբերաթերթեր ծաղկեցան, ինչպէս նաեւ կատարուեցան շարժապատկերի եւ այլ ձեւի արուեստի նախափորձեր, որոնք նախապէս արգիւրուած էին:

Թերթերը ներշնչեցին հետեւորդներու մեծ զանգուած մը՝ հանրային կարծիքը վերածելով քաղաքական ուժի մը, որ իր նախընթացը չէր ունեցած վերջին կէս դարուն ընթացքին:

Իր հրահրականին մէջ Մոհամեդեանի պարտաւորական կեցուածք մը որդեգրած էր. «Այն պայմաններն ու պահանջները, որոնք ձեւաւորուած են արուեստի, մշակույթի եւ իմացութեան մարզերէն ներս, անկարելի կը դարձնեն իմ գործունէութիւնս», կը գրէ Մոհամեդեան: «Մենք չենք կրցած արձանագրել որեւէ յաջողութիւն, որուն արժանի են մեր ազգը, արուեստագէտներն ու գրողները»:

ներն ու գրողները», կ'աւելցնէ ան:

Իրանի բարձրագոյն առաջնորդ Այաթոլլա Ալի Խամենէի հրահրականը է Խաթեմիին, որ ընդունի Մոհամեդեանի հրահրականը, որ գրուած էր ամիսներ առաջ պահպանողականներուն ճնշումներուն տակ, ըստ վստահելի աղբիւրներու:

Այդ հրահրականով, ըստ երեւոյթին, վերջ կը գտնէ պահպանողական հաստատութեան նախնի ձեռք ձգած անկախութիւնը: Ներկայիս երկրին ներքին քաղաքականութիւնը կը գտնուի Այաթոլլա Խամենէիի հակաշիւթին տակ:

Գարնան պահպանողականները սկսան բուռն ձեռով քննադատել մամուլը, երբ Փետրուարի ընտրութիւններուն բարեկարգչականները գրեթէ մեծամասնութիւն կազմեցին խորհրդարանին մէջ: Քուէարկողները մեծապէս սպաւորուած էին այն թեկնածուներով, որոնք կը վայելէին բարեկարգչական թերթերուն նեցուկը:

Ապրիլին դատարարական համակարգի պահպանողականները սկսան փակել տալ օրաթերթեր եւ պարբերաթերթեր, որոնց թիւը 30ի հասած մինչեւ ամառ: Ապա պահպանողականները իրենց ուղղորդութիւնը կը րոնացուցին Իրանի տեղեկագրող օտար մամուլին վրայ: Օտար թղթակիցները ներկայիս յաճախ կը քննադատուին պահպանողական օրաթերթերուն մէջ, եւ անոնցմէ շատեր ամրաստանուած են արեւմուտեան լրտեսներ ըլլալու յանցանքով:

Մոհամեդեանի, որուն նախարարութիւնն էր ներկայիս արգիւրուած թերթերուն արտօնագիր

տուողը, վստահարար պիտի ըլլար վար առնուողը: Անընդհատ յարձակումներու ենթարկուելով՝ ան օրաթերթի մը մէջ իր քաղաքական «դամբանականը» գրեց Մայիսին:

Մինչեւ Հինգշաբթի, 14 Դեկտեմբեր, Խաթեմի կրցած էր զսպել Մոհամեդեանի հրահրականը պահանջող ուժերը: Սակայն նախագահը, որ վերջերս գանգատած էր, թէ ինք սահմանափակ իշխանութիւն ունի Իրանի կառավարման մէջ, ստիպուեցաւ յանձնուիլ անոնց:

Խաթեմիի ճակատի կոռուղը վերջնելով քաղաքական բեմէն՝ պահպանողականները մէջտեղէն հանած եղան իրենց յարձակումներուն եւ նախագահին միջեւ գտնուող արգելքը:

Վերլուծողներու համաձայն, ներկայիս Խաթեմին է անոնց ուղղակի թիրախը, մինչ ան կը պատրաստուի վերընտրութեան համար իր թեկնածութիւնը դնել Մայիսի նախագահական ընտրութիւններուն: Խաթեմիի պահպանողական մրցակիցը՝ Մոհամէտ Ռեզա Պահանար, արդէն իսկ սկսած է քննադատել անոր քաղաքականութիւնը:

Մշակույթի նախարարութեան հարցին մէջ Խաթեմիի անկարողութիւնը յայտնաբերելով, նախարարութիւնը, որ կը համարուի այն փոքր թիւ հաստատութիւններէն, ուր նախագահը ամբողջական ազդեցութիւն կրնար ունենալ, պահպանողականները կը նպատակադրեն յուսալքել Խաթեմիի հետեւորդները:

1997ի իր յաղթանակին ընթացքին Խաթեմի շահեցաւ քուէներուն 70 տոկոսը, որովհետեւ



Նախագահ Խաթեմի եւ քաղաքական իր համախոհներէն Ալի Նաթեղ Նուրի կը մասնակցին որբարոնայ աղօթքին՝ Մոհամեդեանի հրահրականը ընդունելու մէջ օր ետք:

խոստացած էր տալ մամուլի ազատութիւն եւ պարտադրել օրէնքի իշխանութիւնը: Այս անգամ պահպանողականները կը յուսան, որ անոր հետեւորդներուն տոկոսը շատ աւելի քիչ կ'ըլլայ, որովհետեւ ան չկրցաւ յարգել իր այդ երկու խոստումները:

«ԻՆՏԵՐՆԵՆՇՆԸԼ ԸՆԴՈՒՄՆԵՐ»

ԻՐԱՆՅԻ ԱՅԼԱԽՈՐՆԵՐԸ՝ ՆՈՐ ՎՏԱՆԳԻ ԴԻՄԱՅ

Նոր ռազմավարութեամբ մը Իրանի հզօր պահպանողականները իսլամական օրէնքին կը յենին վախճանելու համար իրենց բարեկարգչական հակառակորդները անոնք «Աստուծոյ ղէմ կուտելու» ոճի իրեն համար ճշդուած մահապատիժը կ'օգտագործեն քաղաքական այլախոհները ճգմելու նպատակով:

Պահպանողական ազդեցիկ քաղաքական ղէմք մը, որ հաւանաբար իր թեկնածութիւնը ղնէ յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն, իսկ է, որ երկու հանրայայտ թղթակիցներ կրնան մահապատիժի ենթարկուիլ իրենց հրահրական այն ամրաստանութիւններուն համար, թէ 1990ական թուականներու աշխարհիկ այլախոհներու յաջողական սպանութիւններուն ետին կը գտնուէին իսլամական քաղաքական համակարգի բարձրաստիճան պաշտօնեաները:

Մոհամէտ Ռեզա Պահանարին ըրած ակնարկութիւնները վախ պատճառած են բարեկարգչական թղթակիցներուն, որոնցմէ ոմանք դատաւճիռի կը սպասեն, իսկ ուրիշներ տակաւին դատաւարութեան պիտի ենթարկուին: Անոնք կը հաւատան, որ պահպանողական հաստատութիւնը նոր մարտավարութիւն մը որդեգրած է: Ներկայիս արգիւրուած թերթերու թղթակիցներուն տալ վերջին առիթ մը՝ զղջումնագիր գրել նախապէս իրենց կատարած ամրաստանութիւններուն համար կամ մահապատիժի ենթարկուիլ:

«Թղթակիցներէն ոմանք խոստովանութեան նամակներ ստորագրած են», նշեց բարեկարգչական թղթակիցներէն մէկը՝ աւելցնելով. «Բայց անոնք, որոնք կը մերժեն այդ մէկը ընել, կը վախնան, որ պիտի զիմազրուեն մէջնէն ահաւոր ճակատագիրը»:

Պահանար, որ երկրաչափներու իսլամական ընկերակցութեան ընդհանուր քարտուղարն է, յայտնեց, թէ ներկայիս շարք մը ամրաստանութիւններով բռնադատուած թղթակիցներ Աբպար Կանճի եւ Համատէտին Պաքի կրնան մուկարապիլ (Աստուծոյ ղէմ կուտելու) յանցանքով դատապարտուիլ, եթէ իսկական փաստեր չենրկայցնեն յաջողական սպանութիւններուն գծով իրենց կատարած ամրաստանութիւններուն համար:

Պահանար ուսանողներու առջեւ ունեցած ելոյթի մը ընթացքին յայտարարեց, թէ Իրանի իսլամական քաղաքական համակարգին ուղղուած որեւէ մարտահրաւէր իրողութեան մէջ ուղղուած է իսլամական հաւատքին: Այդպիսի յանցանք մը, աւելցուց ան, արժանի է մահապատիժի:

Պահանարի յայտարարութիւնները քննադատութեան ալիք մը բարձրացուցած են: «Ոչ ոք պէտք է ուխտագնաց համարուի կամ բռնադատուի, որովհետեւ ան իր մտածումները արտայայտած է գրաւոր կամ բռնաւոր ձեւով», ըրողքեց աւագ կրօնաւոր մը:



Կանճի դատարանի մէջ

Սակայն Պահանար հետագային մեղմացուց իր նախապէս կարծի կեցուածքը. «Ես չըսի, թէ անոնք պէտք է մահուան դատապարտուին», նշեց Պահանար՝ աւելցնելով, որ ինք ըսել ուզած էր, որ այդ թղթակիցներուն ամրաստանութիւնները «պէտք է համարուին պարզ սուտեր»:

Ըստ բարեկարգչական թղթակիցներուն, Պահանար լրացաւ յայտնեց պահպանողականներուն այն տեսակէտները, որոնք թաքուցուած մնալին ամիսներէ ի վեր: Իրանի դատարարական համակարգը առաւելագոյն չափով քաղաքականացած է, կ'ըսեն թղթակիցները, եւ պահպանողական քաղաքական ղէմքերը յաճախ մեծ ազդեցութիւն կ'ունենան դատարանին արձակած վճիռներուն վրայ:

Ապրիլին ի վեր շուրջ 30 հրատարակութիւններ փակուած են, եւ մեծ թիւով թղթակիցներ ամրաստանուած են իսլամական սկզբունքները պահանջարկու կամ քաղաքական եւ կրօնական այլախոհութեան յանցանքներով: Յառաջիկայ կրօնաւոր մը՝ Հասան Եուսէֆ Հիքեւարի, կը կարծուի, թէ մահապատիժ ստացած է, հակառակ անոր որ տակաւին գաղտնի կը պահուի անոր վճիռը: Անոր հարցը վերատեսուցեան ներկայացուած է: Իրանի մէջ նախապէս յաճախ պատահած է, որ պաշտպաններ մուկարապիլ յանցանքով դատապարտուելէ ետք մահապատիժ ստացած են:

1999ի Յուլիսին ազգային ապահովութեան բարձրագոյն խորհուրդի քարտուղար Հասան Ռուհանի յայտարարեց, թէ ժողովրդավարութիւն պահանջող ցուցարարները, որոնք հինգ օր շարունակ մասնակցեցան իսլամական յեղափոխութեան ի վեր մէջնէն բուռն բողոքի արտայայտութեան, ամրաստանուած էին մուկարապիլ յանցանքով: Կարճ ժամանակ ետք խումբ մը երիտասարդներ, որոնք ձերբակալուած էին ցուցարարներուն ընթացքին, մահուան դատապարտուած էին: Իրանի բարձրագոյն իրաւաբան Այաթոլլա Ալի Խամենէի անոնց մահապատիժը վերածեց երկրաշարժի: Իրանի դատարարական համակարգչական թղթակիցներու ղէմ կատարուած վերջին ակնարկութիւնները կատարուեցան Կանճիի դատարարութեան ընթացքին, որ յեղափոխական ատենին մը մէջ ամրաստանուած էր ազգային ապահովութիւնը վտանգած ըլլալու յանցանքով: Կանճի անցեալ ամիս վկայած էր, թէ երկու պահպանողական կրօնաւորներ, ներառեալ գաղտնի սպասարկութեան նախկին նախարարը, կը գտնուէին այլախոհներու սպանութիւններուն ետին: Կանճիին կողմէ մատնանշուածները հերքած էին այդ ամրաստանութիւնները:

«ԻՆՏԵՐՆԵՆՇՆԸԼ ԸՆԴՈՒՄՆԵՐ»

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է

Ը. Յ. Դ.

Լիբանանի Երիտասարդական Միութիւնը 2001

ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՅՆԵՐԸ

ՍԱԿ՝ 10,000 Լ. Ո.

ՃԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵՍՊՈՒՌՏԵԱՆ

«Ազգակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակելի փափաքողներէն կը խնդրուի ծանուցումները հարկաւոր ընթացքով (հաստատութեանց պարագայի մ) մայրցամաքային պատճառով կրնան ընդհատուիլ: ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ 6 ՅՈՒՆՈՒՍՐ 2001 <Յ.Դ. «ԳՐՕ» ԿՈՄԻՏԷ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԻ ԱՌԻԹՈՎ

« ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ »

Ամանորի ուրախ հանդէս

նոր ձեպ կը սպասեն

- 2 իւնիստիտուտի եւ Եօթը Թղուկները
- Փինոքիոն եւ Քաջ Նապարը
- Կարմիր Գլխարկիկը

եւ ուրիշ շատ շատ հերոսներ

Նոր Տարուան մաղթանքներ կ'ուղղէ ԿԱԳԱՆԴ ՊԱՊԱՆ

Ինչպէս նաեւ

<ՄՄԱԶԳԱՅԻՆ Ի
«ԿԱՐԿԱՉ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ
«ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ
«ԳԱՅԻԱՆԷ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՊԱՐԱԽՈՒՄԲԸ

Տեղի կ'ունենայ Եօթը, 23 Գեկտեմբերին սկսեալ, կէսօրէ ետք ժամը 5:30ին, «Յ. Տեք Մեյքոնեան» քաղաքապահին մէջ: Տոմսերը ստանալ ՕԵԼԻՒՍ Անթիլիաս. Համազգայինի գրախանութին «Շաղկոյեան» կեդրոն եւ ԵԿԱԷՆ Պոլս Համուտ: ԾԱՆՈԹ: 23, 24 եւ 25 Գեկտեմբերի տոմսերը սպասած են: • 29, 30 Գեկտեմբեր եւ 1 Յունուար 2001ի ելոյթներու տոմսերը ստանալ վերոյիշեալ վայրերէն եւ կիշէն:

«ԻՆՏԵՐՆԵՆՇՆԸԼ ԸՆԴՈՒՄՆԵՐ»

ԽՈՍԱՆ ԳԻՇԵՐԸ - ՌԵՎԵՅՈՆ

ՃԱՆԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՇԱՆԴԵՍ

Կերպ՝

ԱՐԱՐԱՏ ԱՇԱՐԽԵԱՆ

Ընկերակցութեամբ՝

ՃԱՆԹ ՏԻՇՉԵՔԵՆԵԱՆԻ

եւ իր նուազախումբին

Մասնակցութեամբ՝

ՊՈՒՉՈՒՔԻՍԹ ԹՈՐՈՍԻ

24 Դեկտեմբեր 2000, «ԱԹԼԱՍ ՓԼԱՉԱ»

ձաշարանին մէջ, ժամը 9:00էն սկսեալ:

- Անակկալներ
- Զոթիոն
- Տեղեր ապահովելու համար հեռաձայնել 03-297107 թիւին:


Մանկապատանեկան

ԿԱՂԱՆԴԸ... ՑՈՒՐՏ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ ՍԵՋ

Սկանդինավեան երկիրներուն մէջ կաղանդը կը կոչուի «ժուլ»: Կաղանդը ընտանեկան տօն մըն է. Կաղանդի ծառը լուսավորուած, հպարտ կանգնած է սենեակին կեդրոնը:



Սկանդինավեան մէջ կաղանդի ծառին սովորուածները սկսած է 18րդ դարուն:



Յարդէ եղջերուն

դարուն: Ետէտերէնով կաղանդի ծառը կը կոչուի «ժուլկրան»:

Ետէտարները կաղանդի ծառը մեծ լըջութեամբ կ'ընտրեն: Ան պէտք է մեծ ըլլայ եւ ուղիղ, համաչափ եւ ներդաշնակ ճիւղերով: Ծառը պէտք է միշտ կանգնած մնայ կաղանդէն 20 օր ետք: Հին առասպել մը կը պատմէ, թէ այս համաչափութեան սէրը եկած է վաղբիւնկներէն: Արդարեւ, Սկանդինավեան ժողովուրդներուն այս նախահայրերը անջրպետը կը ներկայացնէին իրեն մեծ եղեւին մը, շատուածները նստած էին վերի ճիւղերուն վրայ, մարդ արարածը՝ մէջտեղի ճիւղերուն, իսկ ինկած հսկաները՝ վարուն:


րի ճիւղերուն:

Սկանդինավեան երկիրներու կաղանդի ծառերը յատուկ ուշադրութեամբ վարդարուած են:

ներուն, ձմեռնային արեւադարձի ժամանակ, այս կենդանին կը նուիրուէր թոր չաստուածին, որ յաճախ կոչուած էր «եղջերուն»:

մոմեր, հրեշտակներ եւ յարդէ աստղեր:

